ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<22>> դեկտեմբեր 2014թ. N 243

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից աջակցության նպատակով հատկացնել 430000/չորս հարյուր երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ գումար որպես աջակցություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Փ.Կարապետյանին՝ տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2014 թվականի դեկտեմբերի 22-ի

N 243 որոշման

Դրամական աջակցություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	հասցեն	Գումարը	Ծանոթություն
1	Հայաստանի խուլերի միավորում հասարակական կազմակերպություն կենտրոնական վարչություն	Ք. Երևան 02, Ե.Կողբացի 69	310000/երեք հարյուր տաս հազար/դրամ	
2	ԵԿՄ Արմավիրի մարզային խորհուրդ	Ք. Արմավիր Ջիվանու 6	120000/մեկ հարյուր քսան հազար/դրամ	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ